

Համաձայնեցված է

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Վ. Գաբրիելյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան**

01 դեկտեմբեր 2011 թ.

07 նոյեմբեր 2011 թ. N 43

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 43

**ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ՎՃԱՐՎՈՂ ԱՆԴԱՄՎՃԱՐՆԵՐԸ ԵԿԱՍՏԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՈՆ
ԵԿԱՍՏԻՑ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ և 27-րդ հոդվածների համաձայն համախառն եկամուտը նվազեցվում է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների գծով անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով՝ ֆիզիկական անձի կողմից ներկայացվող հաշվարկի հիման վրա: Անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես եկամտի ստացման հետ կապված ծախսերը: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է Օրենքով նախատեսված կազմակերպություններին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և/կամ դրամական միջոցներ), նրանց մատուցած ծառայությունների արժեքի չափով, բայց Օրենքին համապատասխան հաշվարկված հարկվող եկամտի 5%-ից ոչ ավելի:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն փաստաբանական գործունեություն իրականացնելու համար փաստաբանը պետք է լինի ՀՀ փաստաբանների պալատի անդամ, իսկ նույն օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պարտավոր է մուծել անդամավճարներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածով ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համաձայն փաստաբանական գործունեությամբ զբաղվող փաստաբանի կողմից վճարված անդամավճարները «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն համարվում են ծախս և ամբողջությամբ նվազեցվում են ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամտից: